

մազբութիւններ ունի եւ կը մտածէ թէ թուրք լեզուի արժասացումով կարելի կ'ըլլայ մտեանալ թուրքերուն եւ կազմել համաթրքական պետութիւն:

«Նոյն տրամադրութիւններն ունին նաեւ միւս բոլոր թուրք-թաթարական հանրապետութիւնները»:

Ռուսաստանը վաղն ալ չպիտի կարենայ տարբեր ընթացքի հետեւել թուրանական շարժման դէմ, եթէ նոյնիսկ փոխուի բուլղերիկեան իրաւակարգը, եւ երկրին ղեկը փոխանցուի տարբեր կառավարութեան մը: Քաղաքացիական կռիւնները, անտեսական սազնապաններէ եւ ճգնաժամներէ աչքա՛ն յողնած ուս ժողովուրդը՝ պիտի հարկադրուի զբաղել իր ներքին ցաւերով ու կարիքներով: Բազկացուցիչ ազգերու ազատագրական արշաւանքը նոր թափ մը կրնայ ստանալ ուսական կառավարութեանց փլուզումով ու փոխակերպութիւններով: Ուկրաինիան, Քաղաքները, Վրաստանը, Ատրպէյճանը, Գաղիստանը (եւ միւս թուրք-թաթար ազգերը երբ բռնուին իրենց անկախութեան նորագոյն մարտնչումին, աներկբայելի է որ թուրքիան կոչուած է ճակատագրական դեր մը իսաղալու կովկասեան հողերն ի վեր եւ դէպի արեւելք: Եւ ահա ձեզ առիթը Միացեալ եւ Անկախ Թուրանիայի մը համար:

Այժմ ունիլ բացայայտ է, թէ «ցնորքն» ու «բանաստեղծութիւնը» որքա՞ն տեղ ունին թուրքերու գանկերուն մէջ, որոնցմով կը մըթազնէ թուրանական վտանգին արդէն իսկ մութ եւ արիւնհարոյր ամպերը, ընկ. Ռուրէն:

(Շարունակելի)

### Ո Ւ Ռ Ե Ն Ի Ն

Դեռ յիշում եմ ես: Մի առաւօտ էր, գարնան առաւօտ: Երկիրն արդէն գարթել էր քնից ու ծաղկել էին խոտեր, ծաղիկներ: Կապուտակ լնի ջիւջ հայելու մէջ լացող ուռնին վարսերն էր կախել ու իր լո՛ւռ սրտի վշտերն էր պատմում, մեղմիկ արտասում:

Լնակն ամօքիսած դէն էր շարսել վրայից փողը, ամպէ շղարշը, ու մարմանդ կուրծք գեփիւռին տուած՝ մեղմ օրօրում էր նրա համբոյրից:

Մի վայրի կարապ, ձիւնագոյն, քեթեւ, ծարաւ արեւի, սիրոյ, հեշտանքի, հանգիստ սահում էր այդ լնի վրայ եւ ինքնամոռաց մի երգ էր երգում՝ իր երագանքի, իր սիրոյ համար...

Եւ նրա երգը, սիրոյ մեղեդին, որպէս մի անուրջ, մի երագ վսեմ, հոգիս էր շոյում ու աստուածային մի հեքեաք պատմում:

Սիրոս գարթել էր, գարուն էր այստեղ...

\* \* \*

Իսկ այժմ, այժմ արդէն աշուն է, ցո՛ւրտ, խոնաւ աշուն... Չկան ծաղիկներ, ո՛չ խոտ, ո՛չ տերեւ: Լնակն էլ արդէն մութ է ու մռայլ. ուռին է միայն լուռ ու անտերեւ, քամու առաջին դողում, սարսրում: Նա լաց չի՛ լինում, էլ արցունք չունի, սիրտը ստոել է, էլ վիշտ չի գգում... Երկինքն է լալիս — դանդաղ, միակերպ, մեռած բնութեան մահերգն է երգում: Չկայ կարապը, չկայ ե՛ւ երգը, անուրջների պէս նրանք չհացան... Իսկ իմ օրերս հողմերի քեւին քոս՛ն, հեռացան, անհունութեան մէջ կորան, մահացան...

Սիրոս ստոել է, աշուն է այնտեղ...

Խ. ԶԱԻԿՆ

